ՍԵՐ ԵՎ ՍԻՐԱՀԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ:

ԴՊՐՈՑԻ ՀՈԳԵԲԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Դեռահասության տարիքը անձի զարգացման անցումային և ճգնաժամային փուլերից է համարվում: Համեմատաբար հանգիստ կրտսեր դպրոցական տարիքից հետո երեխան հանդիպում է նոր անցումային շրջանի, երբ կրկին վերափոխվում են մեծահասկաների հետ փոխհարաբերությունները և փոխվում են զարգացման մի շարք գործոններ:

Դեռահասներին բնորոշ դրևորումներից է անկայուն հուզականությունը: Սա արտահայտվում է տրամադրության կտրուկ, երբեմն անադեկվատ փոփոխություններով: Հույզերը ապրվում է դեռահասների կողմից ուժգին, որին համապատասխան նրանց արձագանքները ևս տատանվում են ծայրահեղ բռնկունից մինչև ծայրահեղ անտարբեր: Դեռահասության տարիքը բնորոշվում է տեղի ունեցող ֆիզիոլոգիական փոփոխություններով: Պուբերտադը սեռական հասունացման ժամանակաշրջանն է , որը արտահայտվում է օրգանիզմի բուռն և անհավասարաչափ զարգացմամբ: Փոփոխությունների աստիճանն ու արագությունը տարբեր են աղջիկների և տղաների մոտ:

Առաջատար գործունեությունը դեռահասության տարիքում շփումն է: Հատկապես հաշվի առնելով վերը նշված փոփոխությունները, հաղորդակցման հետ կապված դժվարություններն առավել նկատելի են լինում: Այս փուլում նրանք սկսում են յուրացնել միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունները: Դեռահասներին հարկավոր են մտերիմ ընկերներ, ովքեր կարող են իրենց հասկանալ և ընդունել, ում հետ կարելի է կիսվել գաղտնիքներով և գտնել լուծումներ դժվար իրավիճակներում: Վաղ դեռահասության տարիքում երեխաները կարիք են ունենում ունենալու մտերիմ ընկեր, ով հիմնականում զբաղեցնում իրենց ժամանակի և շփումների մեծ մասը: Այս հարաբերությունները սովորաբար լինում են առաջինը, որտեղ երեխաները խորապես կարևորում են դիմացինի կարիքները, և հաճախ ընկերոջն աջակցելը համարվում է սեփական կարիքներից առավել: Նման հարաբերությունների կառուցման ձևը հիմք է հանդիսանում հետագայում հակառակ սեռերի միջև ինտիմ հարաբերությունների ձևավորման համար: Հասակակիցների հետ շփումը հնարավորություն է տալիս դեռահասներին ավելի հեշտությամբ ընդունել այն բազմաբովանդակ փոփոխությունները, որոնք կատարվում են իրենց հետ և հասկանալ կանանց և տղամարդկանց դերերը հասարակության մեջ: Նույն և հակառակ սեռերի միջև ընկերությունն ու սերտ շփումը հնարավորություն են տալիս դեռահասներին սկսել բացահայտել իրենց սեռին բնորոշ տարբեր առանձնահատկություններ:

Դեռահասների մոտ հարաբերությունների զարգացման սխեմատիկ պատկեր է ներկայացրել (Կ.Ֆլեյք Հոբսոն, Բ.Ռոբինսոն, Պ.Սքին)

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ.

Մինչև հարաբերությունների շրջան: Մեկուսացված միասեռ խմբերաշխատանքի քայլաշար

S Ա

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ.

Խմբի ձևավորում: Միասեռ խմբեր

ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ.

Խմբերի ձևափոխման փուլ: Միասեռ խմբերի լիդերները ստեղծում են տարասեռ խմբեր

ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ.

Ձևավորված խումբ: Տարասեռ խմբերի սերտ համագործակցություն

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՓՈՒԼ.

Խմբերի ձևափոխություն: Ազատ շփումներ զույգերով

Տ - Տղաներ

Ա - Աղջիկներ

ՏԱ - Տղաներ և Աղջիկներ

Շատ դեռահասների համար հակառակ սեռի հետ շփումները դառնում են հարաբերությունների հաստատման մեջ առաջնային պահանջմունք, որի հետ կապված ցանկացած դժվարություն կարող է հանգեցնել բացասական հուզական ապրումների կամ ինքանգնահատականի նվազման: Հաճախ դեռահասներն ընտրում են շփման ոչ ընդունելի տարբերակներ (դասագրքեր, պայուսակ թաքցնել, թեթևակի հրել), որոնց միջոցով իրենց ավելի հեշտ է հակառակ սեռի ուշադրությունը դեպի իրենց: Դեռահասական սիրահարվածության գլխավոր բաղադրիչը շփումն է, քննարկումները, երկխոսությունները, միասնական հետաքրքրությունները: Այս շրջանում դեռահասները ձգտում են հնարավորինս փորձարկել ֆիզիկական և հոգեբանական կոնտակտի հաստատման տարբերակները և հաճախ արժանանում են հանդիմանության կամ ամոթանքի մեծահասկաների կողմից: Քանի որ դպրոցը հանդիսանում է սոցիալիզացիայի հիմնական միջավայրից մեկը, այստեղ էլ ավելի հաճախ կարելի է նկատել դեռահասների սիրային դրսևորումները, ուստի շատ կարևոր է դեռահասներին տրվող առողջ և ուղղորդող արձագանքը հետագա արդյունավետ հարաբերություններ կառուցելու համար: Կարևոր է, որ դպրոցական հոգեբանը այս թեմայով դեռահասների հետ քննարկումներ անցկացնելիս հաշվի առնի այն, որ էական է

- Տալ դրական արձագանք դեռահասների փոխհարաբերություններին (Օրինակ՝ «Ես կարծում եմ, որ շատ լավ է, որ կարողանում եք միասին ավելի մտերիմ շփվել/սիրահարված եք/սիրում եք իրար»:
- Դեռահասների ֆիզիկական կոնտակտը նկատելիս, ներկայացնել, որ նման հարաբերությունների դեպքում բնական է և հասկանալի, որ կարիք են զգում միմյանց ավելի մոտ լինել, միևնույն ժամանակ բացատրելով,

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

որ իրենցից յուրաքանչյուրն ամեն պահ կարող է դիմացինին ցույց տալ իր սահմանները թե հոգեբանականան, թե ֆիզիկական (օրինակ՝ սահմանափակել շփումը, հպումները, գրկախառնությունը, համբուրվելը և այլն):

- Եթե դեռահասների հուզական դրսևորումները հակասում են դպրոցում ընդունված ընդհանուր մոտեցումներին և կանոնակարգերին, ապա հիշեցնել վերջիններիս մասին՝ քննարկելով նրանց հետ հույզերի արտահայտման այլընտրանքային միջոցները (Օրինակ, եթե նկատում եք համբուրվող զույգ, կարող եք ասել. «Հասկանում եմ, որ ուզում եք իրար ավելի մոտ լինել, սակայն դպրոցում համբուրվել չի կարելի: Փոխարենը, դուք կարող եք իրար կողք նստել կամ իրար ձեռք բռնել»):
- Դասարանում, դեռահասների հետ խոսել սիրո և սիրահարվածության մասին ուղիղ, առանց որևէ երրորդ բառ կամ արտահայտություն կիրառելու: Սա հնարավորություն կտա դեռահասներին ավելի բաց ու անկեղծ կիսվել իրենց հույզերով:
- Քննարկել դեռահասների հետ միասին սիրահարվածության ընթացքում հնարավոր բոլոր դրևորումները և իրենց հուզական տատանումները:
- Հաշվի առնել տարբեր տարիքային խմբերի առանձնահատկությունները սիրո և սիրահարվածության թեմայով քննարկում իրականացնելիս:
    - Վաղ դեռահասնության տարիքում ավելի շատ շեշտադրվում են ընկերական հարաբերությունները, տղաների և աղջիկների շփման յուրահատկությունները
    - Միջին դեռահասության տարիքում կենտրոնացում է տեղի ունենում ֆիզիկական փոփոխությունների վրա և հարաբերությունների բնույթը մեծապես պայմանավորված է լինում այդ ընթացքի ֆիզիոլոգիական փոփոխություններով:
    - Ուշ դեռահասության շրջանում մատնանշվում են տղաների և աղջիկների միջև հուզական կապի յուրահատկությունները, ստեղծված հարաբերությունները պահպանելու կարողությունները:

Դպրոցական անձնակազմի արձագանքները ևս շատ կարևոր են այս թեմայի շրջանակներում, ուստի դպրոցական հոգեբանի աշխատանքը աշխատակիցների հետ կարելի իրականացնել հետևյալ փուլերով

- Իրականացնել լուսավորչական սեմինարներ դեռահասության տարիքի հուզական դրսևորումների և փոխհարաբերությունների մասին
- Իրականացնել դեռահասական սիրո և սիրահարվածության թեմայով հանդիպում քննարկումներ
- Ներկայացնել դեռահասների մտերիմ փոխհարաբերություններին արձագանքելու հիմնական առանձնահատկությունները
- Պատրաստել հուշաթերթեր դպրոցի անձնակազմի համար միասնական մոտեցումը բոլորին հասանելի դարձնելու և ամրապնդելու նպատակով
- Յուրաքանչյուր առանձին դեպքի պարագայում իրականացնել տվյալ դեռահասների հետ աշխատող աշխատանքային թիմի հանդիպումներ:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: